22.07.2020 թ.
Ժամը 11:00

թիվ՝ 5

<<Վ. Ա. Ֆանարջյանի անվան ուռուցքաբանության ազգային կենտրոն>> ՓԲԸ
ք. Երևան Ֆանարջյան փ. 76 շ.

Արձանագրություն

<ՈՒԱԿ-ԲՄԱՊՁԲ-20/65> ծածկագրով գնման ընթացակարգի գնահատող հանձնաժողովի
Հանձնաժողովի նիստին մասնակցում էին՝

գնահատող հանձնաժողովի նախագահ
/դեղատան վարիչ/ Ն. Գասպարյան
հանձնաժողովիանդամներ
/դեղագետ/ Մ. Թովմասյան
/հաշվապահ/ Ն. Դավթյան
/հաշվապահ/ Ա. Գևորգյան
/դեղագործ/ Ս. Անանյան
Հանձնաժողովի քարտուղար՝
Արմինե Համբարձումյան

ՀՀ կառավարության 04 մայիսի 2017 թվականի թիվ 526-Ն որոշման 1-ին կետով հաստատված «Գնումների գործընթացի կազմակերպման կարգ»-ի /այսուհետև՝ Կարգ/ 26-րդ կետի 2-րդ ենթակետի համաձայն, գնահատող հանձնաժողովի նիստը համարվում է իրավազոր և հայտարարվում է բացված

Հայտերի գնահատման

Հանձնաժողովի նիստի նախագահ՝ Նելլի Գասպարյան

1. Ընդունել ի գիտություն, որ

15.06.2020թ.-ի թիվ 4 արձանագրությամբ՝ 1-ին, 4-րդ և 5-րդ չափաբաժինների մասով ընտրված մասնակից է ճանաչվել Աբամա Թրեյդ ՍՊԸ-ն (այսուհետև նաև՝ Մասնակից), նույն օրը Տեղեկագրում հրապարակվել է պայմանագիր կնքելու որոշման մասին հայտարարությունը, որտեղ անգործության ժամկետը սահմանվել է 10 օրացույցային օր: Անգործության ժամկետի ավարտից հետո՝ 30.06.2020թ.-ին Պավիրատուն պայմանագիր կնքելու վերաբերյալ ծանուցում է ուղարկել Մասնակցին՝ կցելով պայմանագրի և ֆինանսկան միջոցներ նախատեսվելու վերաբերյալ համաձայնագրի նախագծերը, ինչպես նաև բանկային երաշխիքի տեսքով՝ պայմանագրի և որակավորման ապահովումների օրինակելի ձևերը: Պայմանագրի և որոկավորման ապահովումները բանկային երաշխիքի տեսքով ներկայացնելը պայմանավորված է այն հանգամանքով, որ Պայմանագրի գինը և Պայմանագրով նախատեսված ֆինասկան միջոցները գերազանցում են գնումների բազային միավորի տասնապատիկը, այն է՝ 17.530.000 (տասնյոթ միլիոն հինգ հարյուր երեսուն հազար) ՀՀ դրամ, ներառյալ ԱՀ-ն:

Կարգի 33-րդ կետի 12-րդ ենթակետի համաձայն՝ պայմանագրի և որոկավորման ապահովումները բանկային երաշխիքի տեսքով անհրաժեշտ էր ներկայացնել, ֆինանսկան միջոցներ նախատեսվելու վերաբերյալ համաձայնագիրը Մասնակցին ուղարկելու օրվանից հաշված 15 աշխատանքային օրվա ընթացքում, այսինքն՝ մինչև 21.07.2020թ.-ն: Սակայն պայմանագրի և որոկավորման ապահովումները բանկային երաշխիքի տեսքով նշված ժամանակահատվածում չի ներկայացվել Պատվիրատուին:

Ելնելով վերոգրյալից գնահատող հանձնաժողովը հայտնում է, որ սույն գնման ընթացակարգի շրջանակներում Աբամա Թրեյդ ՍՊԸ-ն զրկվում է 1-ին, 4-րդ և 5-րդ չափաբաժինների մասով պայմանագիր ստորագրելու իրավունքից:

Ընդունել որոշում ***կողմ 5 (հինգ), դեմ 0 (զրո)*** ձայներով

Ղեկավարվելով «Գնումների մասին» ՀՀ օրենքի 37-րդ հոդվածի 1-ին մասի 1-ին կետի դրույթներով գնահատող հանձնաժողովը որոշեց՝ գնման ընթացակարգը 1-ին չափաբաժնի մասով հայտարարել չկայացած, իսկ հրավերի 8.20 կետի համաձայն **գնման ընթացակարգի ընտրված մասնակից ճանաչել և պայմանագիր կնքելու առաջարկ ներկայացնել՝**

1. «Վիգ Ֆարմ» ՍՊԸ-ին 4-րդ չափաբաժնի մասով

2. «Գեղամ Կիրակոսյան» ՍՊԸ-ին 5-րդ չափաբաժնի մասով

Գնումների մասին ՀՀ օրենքի 10-րդ հոդվածի համաձայն սահմանել 10 օրացույցային օր անգործության ժամկետ:

Ընդունել որոշում կողմ 5 ***(հինգ),*** դեմ ***0 (զրո)*** ձայներով

գնահատող հանձնաժողովի նախագահ
/դեղատան վարիչ/ Ն. Գասպարյան
Հանձնաժողովի անդամներ
/դեղագետ/ Մ. Թովմասյան

/հաշվապահ/ Ն. Դավթյան

/հաշվապահ/ Ա. Գևորգյան

/դեղագործ/ Ս. Անանյան

Հանձնաժողովի քարտուղար՝
Արմինե Համբարձումյան